ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԻ ԶՈՐԱԿՈՉԻԿԸ

- Ծանոթանալ իր վերաբերյալ կայացված որոշումներին.
- Ստանալ իր առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանների (սահմանափակումների) մասին տեղեկություններ.
- Ծանոթանալ իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին.
- Ստանալ բժշկական հետազոտության և փորձաքննության եզրակացությունները.
- Բողոքարկել զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի եզրակացությունը Կենտրոնական բժշկական հանձնաժողով.
- Բողոքարկել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունը Պաշտպանության նախարարին կամ դատարան՝ երկամսյա ժամկետում.
- Անցնել լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտություն՝ բժիշկ-մասնագետի գրավոր հիմնավորմամբ՝
  - եթե բավարար չեն իր առողջական վիճակի վերաբերյալ տվյալները.
  - եթե չի անցկացվել համապատասխան լաբորատոր - գործիքային հետազոտություն.
  - եթե հետազոտական փաստաթղթերի միջև կան հակասություններ:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ՝

- ✓ Այս ցանկը սպառիչ չէ, և զորակոչիկն ունի նաև օրենքով սահմանված այլ իրավունքներ.
- ✓ Զորակոչիկն իրավունք ունի ներկայանալ առավել մոտ զինկոմիսարիատ, եթե ծանուցման մեջ նշված ժամկետում հնարավոր չէ ներկայանալ հաշվառման վայրի զինկոմիսարիատ:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ք. Երևան, Պուշկինի 56ա
+374 10 539 271 (քաղաքային)
+374 43 513 116 (բջջային)
ombuds@ombuds.am (էլեկտրոնային փոստ)

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Շիրակի մարզ, ք. Գյումրի
Միհեր Մկրտչյան 44/46
+374 312 41981

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ
Կենտրոնական հրապարակ 4
+374 264 30116

Սյունիքի մարզ, ք. Կապան
Մելիք Ստեփանյան 6
+374 285 20116

OMBUDS.AM
PASHTPAN.AM

116 ԹԵԺ ԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԻՆՉՊԷՍ ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԶՈՐԱԿՈՉԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

UK Government

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ

- Զորակոչիկն անձամբ.
- Զորակոչիկի ծնողը կամ մերձավոր այլ ազգական.
- Զորակոչիկի ներկայացուցիչը, փաստաբանը:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ՝

✓ Պաշտպանին կարող է դիմել նաև հասարակական կազմակերպությունը, եթե կա զորակոչիկի գրավոր համաձայնությունը:

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ

- Գրավոր՝
  - փոստով կամ Պաշտպանի աշխատակազմ անձամբ հանձնելով (ք. Երևան, Պուշկինի 56ա).
  - էլեկտրոնային փոստով (ombuds@ombuds.am).
  - Պաշտպանին կամ աշխատակազմի իրավասու ներկայացուցչին դիմումն առձեռն հանձնելով:
- Բանավոր՝
  - Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցչին անձամբ հայտնելով.
  - աշխատակազմ զանգահարելով (+374 10 539271 կամ +374 43513116).
  - 116 թեժ գծին ահազանգ ներկայացնելով:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ՝

✓ Դիմումը պետք է լինի ստորագրված և ներառի դիմողի՝
  - անունը, ազգանունը.
  - հասցեն.
  - հետադարձ կապի վերաբերյալ տվյալները (հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն և այլն).

✓ Դիմումի համար հատուկ ձև սահմանված չէ, պետք է ուղղակի հստակ ներկայացնել խնդիրը.

✓ Պաշտպանին կարելի է դիմել նաև խորհրդատվություն ստանալու համար:

ԻՆՉ ԿՑԵԼ ԴԻՄՈՒՄԻՆ

Դիմումին ընթացք տալու համար որևէ փաստաթուղթ կցելը պարտադիր չէ. միևնույնն է՝ Պաշտպանի աշխատակազմում այն ուսումնասիրվելու է.

Եթե կան վերաբերելի փաստաթղթեր, ապա դիմումի հետ միասին դրանք ներկայացնելը կարևոր է:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ՝

✓ առողջական վիճակի վերաբերյալ դիմում ներկայացնելիս ցանկալի է տրամադրել բժշկական փաստաթղթեր.

✓ հավելյալ տեղեկությունը կնպաստի բարձրացված խնդրի ավելի արագ և արդյունավետ լուծմանը.

✓ եթե դիմողը զորակոչիկի ծնողն է կամ այլ մերձավոր ազգականը, ապա պետք է նշել նաև զորակոչիկի վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ.
  - օրինակ՝ ծննդյան օրը, ամիսը, տարին, զինկոմիսարիատը:

ԻՆՉ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ Է ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ԴԻՄՈՒՄԸ

- Դիմումը Պաշտպանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո իրականացվում է ուսումնասիրություն.
- Եթե առկա է իրավունքների ենթադրյալ խախտում, ապա դիմումն ընդունվում է քննարկման.
- Դիմումի ուսումնասիրության և քննարկման ընթացքում Պաշտպանի աշխատակազմը պարզաբանումներ է պահանջում իրավասու մարմիններից.
- Անհրաժեշտության դեպքում Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցիչներն իրականացնում են այցեր.
  - օրինակ՝ կենտրոնական հավաքակայան, զինվորական հոսպիտալ:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ՝

✓ Պաշտպանին դիմում ներկայացնելը չի կասեցնում զորակոչը.

✓ Քաղաքացուն զորակոչելը խոչընդոտ չէ դիմումը քննարկելու համար.

✓ Պաշտպանին դիմում ներկայացնելը չի կասեցնում խախտված իրավունքների պաշտպանության համար այլ մարմիններ դիմելու ժամկետները.
  - օրինակ՝ դիմել է դատարան:

ԵՐԲ Է ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

- Երբ բարձրացված հարցը դրական լուծում է ստանում.
- Երբ պարզվում է, որ իրավունքի խախտում առկա չէ:
- Երբ առաջանում են դիմումը չքննարկելու հիմքեր.
  - օրինակ՝ եթե Պաշտպանին դիմելուց հետո անձը նույն խնդրով դիմել է դատարան:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ՝

✓ եթե դիմումի քննարկման արդյունքում պարզվում է, որ առկա է զորակոչիկի իրավունքների կամ ազատությունների խախտում, ապա Պաշտպանը կայացնում է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում.
  - օրինակ՝ առկա է տարկետման հիմք, սակայն անտեսվել է զինկոմիսարիատի կողմից.

✓ այդ դեպքում Պաշտպանը դիմում է համապատասխան իրավասու մարմին և առաջարկում վերացնել խախտումը.

✓ Պաշտպանը կարող է ներկայացնել իրավունքի խախտում թույլ տված պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու առաջարկ.

✓ պասխանատվության ենթարկելու առաջարկի հետ մեկտեղ Պաշտպանը կարող է առաջարկել կարգապահական տույժի տեսակը: